բօնզան ոտքի ելաւ ու պարզեց ձեռքերը ջերմեռանդութեամբ դէպի երկինքը. հնչում էր շարունակ նոյն երգի նոյն եղանակը, մերթ քահանայի, մերթ խմբի բերանից: Նրանք պաղատագին ու յափշտակութեամբ կրկնում էին անդադար իրանց մեծ աստծոյ, Ամիդայի անունը, որի մեծագիր արձանը գթառատ հայեացքով ցած էր նայում խորանից: Նրա ոտների տակ էր մի քանի ծաղիկ ու մի երկու մոմ:

Վանականների տարօրինակ զգեստը աւելի էր սաստկացնում բեմական տպաւորութիւնը:

Նախ կարծես մուրացկանի հագուստ լինէր, գոյնզգոյն կարկատաններով. բայց քանի նայում էի՝ այնքան գեղեցիկ էր դառնում ու անսովոր:

Սպիտակ երկար շապկի վրայից գցած էր մի սեւ թափանցիկ կտոր. սրա վրայով էլ ուսընդանութ կոչկած էր դեղին կրկնոց:

Այս բոլորը սեւի, սպիտակի ու դեղինի մի խառնուրդ էր առաջացնում:

Այն ինչ բօնզայի ու ամբողջ խմբի յաջորդական ու կանոնաւոր երկրպագութիւնները չէին դադարում, նոյնպէս եւ նրանց սրտաբուղխ ջերմ աղօթքն ու կանչերը:

Ես ինձ էլեքտրացած, հիպնոզացած էի զգում ձայնի ու շարժումների այդ միակերպ ու միապաղաղ ելեւէջից. այդտեղ կար ե՛ւ ծովի ալիքների ընթացքը, ե՛ւ կեանքի հոսանքի յարատեւ ու յաջորդական անխուսափելիութիւնը, ե՛ւ մարմնացումը մարդկային անզօր ճիգի, որ ստեղծագործութեան գաղտնիքի խորքն է ուզում թափանցել:

Բայց կրկին լսեց փայտիկների բաղխումը, եւ ամբողջ խումբը միասին նստեց նորից նախկին տեղերը փոքրիկ